ԵՐԵՎԱՆԸ VII—IX ԴԱՐԵՐՈՒՄ

Պրոֆ. Թ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ

VII—IX դարերը մեր մայրաքաղաքի պատմության մեջ առաջին հերթին հայտնի են նրանով, որ այդ ժամանակվանից սկսած նրա մասին գրավոր տեղեկություններն ու հիշատակություններն արդեն դառնում են անընդհատ, հնարավորություն տալով այս կամ այն չափով ամբողջական ձևով ներկայացնելու նրա պատմությունը։

Հայագիտությունը վաղուց արդեն նկատել է, որ Երևանի առաջին ստույգ հիշատակությունը մեր մատենագրության մեջ կատարվել է VII դ. սկզբին Աբրահամ կաթողիկոսի գումարած եկեղեցական ժողովի առնչությամբ[1], որի մասին «Գիրք թղթոցում» հատուկ վերնագրի տակ ասված է. «Եւթն ու տասներորդ ամի Ապերուէզ Խոսրովու արքայից արքայի, իմ Աբրահամու Հայոց կաթուղիկոսի և աթոռակցաց իմոց... և ...իշխանաց և աշխարհականաց և ուղղափառաց առաջի կացեալ. Թէոդորոս սեպհական գնդին եպիսկոպոս... Յաւիտեան Աղիվարդայ, Դաւիթ Երևանայ, Իսմայէլ Գառնոյ, Յուհանէս Աւանի, Իսրայէլ Պտղավնից, Ջոջիկ Երևանից, Յոհանիկ Արտաւաղդայ Ապարանից, Արատ և Որդեակ և Աբրահամ Փարպիոյ, Միքայէլ Աղցից, Գրիգորիս Արճոյ, Կոզմաս Ուրդայ, Մայէն միւս Արճոյ, Յոհանիկ Արծափայ, Սիմոն Դատ աւանից, Սամուր Բագարանի, և այլ վանից երիցամբ հանդերձ. եկեալ յանդիման մեր գրարեպաշտութիւն խոստովանեցին, նզովելով նոյնաձևս ըստ երանելի հարցն մերոց զամենայն հերձուածողս, և զԱրիոս. և զՄակեդոն, և զՆեստոր, և զԵւտիքոս, և զչար ժողովին Քաղկեդոնի, և զպիղծ տումարն Լևոնի, և աղաչանս մատուցանելով առաջի մեր, խառնել զինքեանս ի միաբանութիւն եկեղեցւոյ ճշմարիտ աւատին Քրիստոսի»[2]։

Ինչպես տեսնում ենք, Աբրահամ կաթողիկոսն այդ ժողովը հրավիրել էր աղանդների, առաջին հերթին՝ քաղկեդոնականության դեմ պայքարելու նպատակով։ Դրան մասնակցում էին եպիսկոպոսներ, տարբեր աստիճանի իշխանավորներ, երեցներ և այլ կարգի մարդիկ։ Ժողովը գումարվել է պարսից Խոսրով II (Փարվեզ, 590—628 թթ.) թագավորի 17-րդ տարում, այսինքն՝ 607 թ.[3]։ Այդ ընդարձակ հիշատակությունը կարևոր աղբյուր է նաև Հայաստա-

---

1 Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 299։ Մեսրովբ արքեպիսկոպոս Սմրատյանց, Տեղեկագիր Գեղաքունի ծովագարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Պաղարշապատ, 1895, էջ 5։ Հ. Ս. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հատ. 1, Վենետիկ, 1903—1905, էջ 658։ Երվանդ Շահազիզ, Հին Երևանը, Երևան, 1931, էջ 68—69 և այլն։

2 «Գիրք թղթոց», Մատենագրութիւն նախնեաց, Թիֆլիս, 1901, էջ 150—151։ Հմմտ. Ուխտանէս եպիսկոպոս, Հատուած երկրորդ, Պատմութիւն բաժանմանք Վրաց ի Հայոց, էջ 63—67։

3 Հ. Աճառյանը, հիմք ընդունելով Ուխտանես եպիսկոպոսի հիշատակությունը, ժողովի գումարման տարին համարում է 607 թ. (տե՛ս «Հայոց անձնանունների բառարան», հատ. Բ, Երևան, 1944, էջ 26), իսկ Մեսրովբ Սմրատյանցը այն դնում է 596 թ. տակ (տե՛ս նշվ. աշխ., էջ 5)։

նի VII դարի վարչա-տերիտորիալ բաժանման, վանքերի ու եկեղեցիների և այլնի համար։ Սակայն մեզ համար տվյալ դեպքում ամենից կարևորը Երևանի հիշատակման փաստն է ու նրա որպիսությունն անուղղակիորեն բնորոշող կողմնակի ակնարկները։ Դրանում, ճիշտ է, Երևանի (ինչպես և հիշատակված մյուս շատ վայրերի) բնույթի, մեծության մասին ոչինչ չի ասված, բայց անտարակուսելի է, որ նրա հոգևորական ներկայացուցչի ներկայությունը ժողովին արդեն բնորոշում է նրա կարևոր և մեծ բնակավայր լինելը։ Հենց միայն սոսկ հիշատակությունից ելնելով Ղ. Ալիշանը VII դ. սկզբի Երևանը համարում է «իբրեւ երեւելի աւան մի, զի ընդ պատուաւոր վաներիցունս կարգի և սորայս՝ Դաւիթ անուն»[4]։ Հետևելով Ղ. Ալիշանին, Հ. Էփրիկյանը, Ե. Շահազիզը և մի շարք այլ հայագետներ նույնպես այդ ժամանակվա Երևանը համարում են «երեւելի աւան»[5]։ Ղ. Ալիշանի և նրա հետևորդների տեսակետի հետ կարելի է միանալ առանց տարակուսանքի։ Դրա արժանահավատությունը մեր կարծիքով երևում է նաև նրանից, որ բացի վանքերից, գավառներից ու վարչա-տերիտորիալ այլ միավորներից, նշված եկեղեցական ժողովին ներկայացուցիչներ էին ուղարկված բացառապես միայն այս կամ այն չափով նշանավոր բնակավայրերից՝ ավաններից, գյուղաքաղաքներից և քաղաքներից (Օշական, Եղվարդ, Գառնի, Ավան, Արտավազդի ապարանք, Փարպի, Աղցք, Արծափ, Դատ ավան, Բագարան և այլն)։

Ինչ վերաբերում է նույն «Գիրք թղթոցի» մեջ հիշատակված «Ջոջիկ Երեվանից» արտահայտությանը, ապա Ուխտանես եպիսկոպոսի հիշատակության համաձայն[6] այն պետք է հասկանալ «Ջոջիկ Արամունից» (այժմ՝ Արամուս գյուղ ՀՍՍՀ Արովյանի շրջանում) ձևով, և Երևանին չի վերաբերում, ինչպես ժամանակին նկատել է բանասեր Ստեփան Կանայանցը[7]։ Այնպես որ, ժողովին Երևանից մասնակցում էր միայն մի վաներեց՝ Դավիթը։

Հաջորդ հիշատակությունը, որը բանասերների ու պատմաբանների մոտ՝ սկսած Հովհ. Շահխաթունյանցից և վերջացրած մեր դարի որոշ հեղինակներով, առաջացրել է տարակարծություն, դա Սեբեոսի հաղորդումն է արաբական արշավանքների և այդ արշավանքների ընթացքում Երևանի մոտ տեղի ունեցած կռվի մասին։ Մինչև այդ հարցի քննարկումը վկայակոչենք Սեբեոսի համապատասխան հիշատակությունը.

«Եւ եղև ի գալ միւսում ամի եկն զաւրն Իսմայելի յԱտրպատական, և բաժանեցան յերիս։ Առաջ մի յԱյրարատ, և առաջ մի ի Սեպհական գնդին կողմանսն, և առաջ մի յԱղուանիս։ Արդ՝ որք ի կողմանս Սեպհական գնդին արշաւեալ սփռեցան և հարեալ զամենայն կողմանսն զայնոսիկ սրով սուսերի, առին զաւար և զգերութիւն։ Եւ եկին ժողովեցան ի յԵրեւան, և մարտեան ընդ բերդին, և ոչ կարացին առնուլ»[8]։

որը ճիշտ չէ։ Լ. Մելիքսեթ-Բեկը գրում է, որ այդ ժողովը տեղի է ունեցել մինչև 602 թ., առանց ճիշտ թվականը նշելու (տե՛ս ՍՍՌՄ ԳԱ Հայկական ֆիլիալի «Տեղեկագիր», Երևան, 1940, № 4—5, էջ 118)։

4 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 299։

5 Էփրիկյան, նշվ. աշխ., հատ. I, էջ 658։ Ե. Շահազիզ, նշվ. աշխ., էջ 68—69։

6 Ուխտանես եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 64։

7 Ստեփան Կանայանց, Անհայտ գաւառներ հին Հայաստանի, Վաղարշապատ, 1914, էջ 86, ծանոթ. 4։

8 «Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն», Երևան, 1939, էջ 118։

Հաջորդ՝ ԽԳ գլխում Սեբեոսը պատմում է, թե ինչպես է Թեոդորոս Ռշտունին իր զորքերով մարտնչել արաբների դեմ[9]։

Այդ է այն բոլորը, որ Սեբեոսը հաղորդում է Վասպուրական (Սեպհական գունդ) և Այրարատ արշաված արաբական զորքերի գործողությունների ու Թեոդորոս Ռշտունու կողմից կազմակերպված դիմադրության մասին։

Արաբական այդ արշավանքն ըստ Ղ. Ալիշանի կատարվել է 642—643 թթ.[10], ըստ Մեսրովբ Սմբատյանցի՝ 642 թ.[11], իսկ ըստ Հ. Մանանդյանի՝ 650 թ.[12]։ Ամենայն հավանականությամբ ընդունելի է Ղ. Ալիշանի և նրան հետևող Մ. Սմբատյանցի կարծիքը։ 650 (ավելի ճիշտ 660) կամ 658 թ. կատարված արշավանքը, որի մասին խոսք կլինի մի փոքր հետո, հավանաբար ոչ մի առնչություն չունի Սեբեոսից վերը մեջբերված հիշատակության հետ։

Մեր մայրաքաղաքի պատմության համար էական նշանակություն ունի այն հարցը, թե Սեբեոսի հիշատակած «յԵրևանը» իրո՞ք Երևանն է, թե՞ «Առեստաւանը» կամ «Հերավանը» (Հերը, Խոյը)։ Թադեոս Ավդալբեկյանը, 1926 թ հատուկ հոդվածով հանդես գալով, փորձել է Սեբեոսի հիշատակած «յԵրևանը» նույնացնել Վանա լճի հյուսիս-արևելյան ափին եղած Առեստի կամ Առեստավանի հետ և, այդպիսով, ժխտել է Սեբեոսի մոտ Երևանի հիշատակությունը։ Նրա համար հիմք է ծառայել Սեբեոսի հիշատակության միայն աշխարհագրական կողմը՝ Սեպհական գնդի (կամ «կողմի Վասպուրական գնդի»[13]) ուղղությամբ արշաված արաբական զորախմբի հավանական ուղին[14], առանց նկատի ունենալու, որ պատմիչը կարող էր արշավանքը նկարագրելիս խախտել հարձակման ենթակա բնակավայրերի թվարկման հաջորդականությունը, ինչպես այդ կարելի է նկատել ուրիշ պատմիչների ու աշխարհագիրների մոտ։ Թ. Ավդալբեկյանը նկատի չի ունեցել նաև այն, որ Առեստավանը, ինչքան մեզ հայտնի է, այդ ժամանակներում բերդ կամ ամրոց չուներ, նա չէր կարող դիմադրել արաբական զորքերին և անմատչելի մնալ նրանց համար։ Իր ժամանակին Սեբեոսի այդ հիշատակության վերաբերյալ որոշ կասկածանք է հայտնել նաև Հովհ. Շահխաթունյանցը[15], բայց առանց մերժողական եզրահանգման, ինչպիսին արել է բանասեր Թ. Ավդալբեկյանը, գրելով թե՝ «Սրանով (իր հոդվածով—Թ. Հ.) Երևանի առման հիշատակության առասպելը չքանում է, սրա հետ միասին վերանում է Սեբեոսի հիշյալ հատվածի կոպիտ հակասությունն էլ։ Եվ որովհետև Սեբեոսը մի ուրիշ տեղ ևս Երևանի անունը չէ տալիս, նշանակում է Սեբեոսի «Պատմութեան» մեջ Երևանի մասին հիշատակություն չկա առհասարակ»[16]։ Ակադեմիկոս Հ. Մանանդյանը պատմագիտական և պատ-

9 Նույն տեղում, էջ 119։

10 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 299։

11 Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 5։

12 Հակոբ Մանանդյան, Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պևտինգերյան քարտեզի, Երևան, 1936, էջ 145։

13 Ղ. Ալիշան (Այրարատ, էջ 420) և Ն. Ադոնցը (Армения в эпоху Юстиниана, СПБ, 1908, էջ 318—320) համոզիչ կերպով ցույց են տվել, որ Վասպուրականն ու «կողմը Սեպհական գնդին» նույնն են։

14 Մանրամասն տե՛ս Թադեոս Ավդալբեկյան, Բանասերի օրագրից, Երևանը Սեբեոսի պատմության մեջ, «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1926, № 11—12, էջ 500—505, 587—590։

15 Հովհաննես Շահխաթունյանց, Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հատ. II, էջմիածին, 1842, էջ 134—135։

16 Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1926, № 10—11, էջ 590

մա-աշխարհագրական առումներով մանրամասն վերլուծելով արաբական այդ զորաբանակի արշավանքի ուղղությունը, մերժում է Թ. Ավդալբեկյանի՝ Սեբեոսի հիշատակած «յԵրեւանը» «Առեստաւանը» համարելու կարծիքը[17], բայց ինքն էլ այն համարում է «Հերի» (նրա մոտ՝ «Հերաւան») աղճատումը. «Երեվանը» պարզ մի աղճատումն է, անշուշտ, վերոհիշյալ հատվածում (Սեբեոսի պատմության), սակայն ոչ թե «Առեստաւան» կամ «Երաստաւան», այլ «Հերաւան» տեղանվան»[18].—եզրակացնում է նա։

Մեր կարծիքով անընդունելի է նաև Հ. Մանանդյանի տեսակետը։ Այն նույնպես չունի պատմական ամուր հիմքեր։ Նախ, մեր մատենագրության մեջ «Հերը» (Խոյ) երբեք «Հերաւան» ձևով չի հիշատակվում, հետևապես այն ամենևին չի կարող շփոթվել «յԵրեւանի» հետ կամ «սղճատվելով» (որն ավելի անհավանական է) դառնալ «յԵրեւան»։ Մեր V դ. պատմիչների մոտ «Հերը» Զարևանդի հետ միասին հիշատակվում է որպես գավառ. «...չորեքտասաներորդ իշխանն Շահապն Զարաւանդ և Հեր գաւառի»[19], «յանկարծակի գուշակ հասանէր առ Խոսրով 'ի Հէր և 'ի Զարաւանդ գաւառ»[20], «փախաւ ի կողմանս Հերայ»[21], «Զգունդն առաջին հեռացուցի ի կողմանս Հերայ և Զարևանդայ»[22], «և եկեալ հասանէր յաշխարհն Հայոց ի Հեր և ի Զարաւանդ գաւառ»[23], «Եւ յետ սակաւ ինչ աւուրց անցելոց լուան, եթէ զօր եհաս բաղում ի Հեր և ի Զարևանդ գաւառ», «և երկրորդ՝ ասէին, թերևս անդէն ի տեղւոջն ի Հեր և ի Զարևանդ գաւառին վճարին ելք գործոյն պատերազմին», «եկեալ հասեալ են ի սահմանս Հերայ և Զարաւանդ գաւառի բաղում զորագլուխք», «և զայրուձին Հեր և Զարաւանդ գաւառի», «Եւ եկեալ Նիխոր յաշխարհն Հայոց՝ ոչ իշխեաց միջամխել ի Հայոց տեղիսս, այլ դադարեալ ի գաւառին որ կոչէր Հեր», «Եւ երթեալ նոցա ստ Նիխոր ի գաւառն ի Հեր»[24]։

Արաբական շրջանի պատմիչները նույնպես որևէ հիմք չեն տալիս «Հերը» «Հերաւան» կոչելու կամ գավառի փոխարեն ավան համարելու։ Սեբեոսը Հերն ամենևին չի հիշատակում, Ղևոնդ Երեցը հիշատակում է մի տեղ, այն էլ որպես գավառ («և գայր հասանէր ի գաւառն Հեր»[25], իսկ Շապուհ Բագրատունուն վերագրված պատմության մեջ և Հովհաննես Դրասխանակերտցու մոտ հիշատակվում է որպես քաղաք. «...այժմ ունիք զտերութիւնք Զարևանդ գաւառի և զաւանդ քաղաքն Հերայ», «...և եթէ կամիմ՝ այս աւր քակեմ պարիսպ Հերա և զերկիրն աւար հարկանեմ», «աջողեցաւ գնալն ի քաղաքն ի Հեր», «...դիմաւք չէ պարտ քեզ երթեալ ի բոյն իժից, ի քաղաքն Հերայ», «...և տարան սպանան

17 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 144—147։

18 Նույն տեղում, էջ 146։

19 «Ագաթանգեղայ Պատմութիւն», Թիֆլիս, 1882, էջ 462։

20 «Փավստոսի Բուզանդացւոյ պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1832, էջ 18։

21 Մովսես Խորենացու հիշատակած «ի կողմանս Հերայ» արտահայտությունը հավանաբար պետք է հասկանալ ոչ թե «Հերը», այլ Հարք գավառը՝ Արածանիի ափերին։

22 «Մովսէսի Խորենացւոյ պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913, էջ 158։

23 «Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», Երևան, 1957, էջ 75 և 105։

24 «Ղազարայ Փարպեցւոյ պատմութիւն Հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան», Թիֆլիս, 1907, էջ 144—145, 147, 282, 351, 352, 357։

25 «Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 134։

ի քաղաքն Հերայ»[26], «Ապա յաւուրս աշնայնոյն մեծ իշխանն չուէր գնայր զկողմամբք Հերայ ի հանդիպումն գլխաւորի քաղաքին»[27]։

Այսպիսով, V և հետագա դարերի պատմագիրների մոտ «Հերը» «Հերավան» ձևով երբեք չի հիշատակված, «Հերը» երբեք նրանք ավան չեն կոչել, այլ գործածել են «գավառ» և «քաղաք» իմաստներով։ Նույն այդ հիշատակություններից նաև պարզ երևում է, որ Ատրպատականից Վասպուրական տանող առևտրա-տնտեսական ու ռազմական ամենակարևոր ճանապարհի առաջին կայանը Հայաստանի սահմանագլխին Հերն էր։ Սասանյաններն իրենց արշավանքներն այս կողմերով կատարելիս Հայաստան էին մուտք գործում Հեր և Զարևանդ գավառներով։ Իսկ այդ գալիս է ժխտելու և՛ Թ. Ավդալբեկյանի այն ենթադրությունը, թե Վասպուրականում Սեբեոսի հիշատակած արաբական զորագնդի նման կետը Առեստավանն էր, և՛ Հ. Մանանդյանի այն կարծիքը, թե նույն զորախումբը Վասպուրականում ավարառուական արշավանքներ կատարելուց հետո է միայն եկել «Հեր» (նրա մոտ՝ «Հերավան»)[28]։

Եվ վերջապես, ինչու Սեբեոսին չհասկանալ ու չընդունել այնպես, ինչպես ինքն է հաղորդում։ Սեբեոսի պատմության ձեռագրերում, բացառությամբ մեկի, որ ունի «Հերևան» ձևը, արաբական նշված զորախմբի մարտերից մեկի վայրը համարված է «յԵրևանը», ինչպես միանգամայն ճիշտ կերպով նշում է նաև Հ. Ժամկոչյանը[29]։ Եթե այդ այդպես է, ապա VII դարի առաջին կեսին Երևանը, հնագույն ժամանակների նման, ուներ իր բերդը և էական դեր էր խաղում ռազմա-ստրատեգիական առումով։

Պատմական աղբյուրների մանրազնին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Սեբեոսի հաղորդումը VII դ. Երևանի մասին միակ հիշատակությունը չէ։ Տարբեր առիթներով նույն հարցին անդրադարձած հեղինակների մեծագույն մասն այն կարծիքին է, որ Սեբեոսի հիշատակությունն այդ դարի Երևանի մասին միակն է, և որ հետագայի մյուս հեղինակները՝ Հովհաննես Դրասխանակերտցին, Սամվել Անեցին և նրանցից առաջ ապրած Ղևոնդ Երեցը համառոտ կրկնել են Սեբեոսի՝ վկայակոչված հիշատակությունը[30]։ Իրոք որ Ղևոնդ Երեցը, նկարագրելով արաբական արշավանքները՝ որոշ տեղերում օգտվել է Սեբեոսից, բայց առանց նրան մեխանիկորեն կրկնելու։ Այսպես, եթե վերանալու լինենք ժամանակագրական կարգի որոշ խախտումներից, դեպքերի հաջորդականության և աշխարհագրական անունների որոշ տարբերություններից, ապա լիովին նմանություն կարելի է տեսնել Սեբեոսից մեջբերված հատվածի և Ղևոնդ Երեցի հետևյալ հիշատակության միջև. «Ապա յետ այնորիկ յերեսուն և վեցերորդ ամի իշխանութեանն նոցա (արաբների—Թ. Հ.) զօր ժողովեալ դարձեալ յարձակեցան ի վերայ աշխարհին Հայոց. որոց էին գլխա-

26 «Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ», էջմիածին, 1921, էջ 67, 68, 69, 71։

27 Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 141։

28 Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1926, № 9—10, էջ 588—589, Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 145—146։

29 Հ. Ժամկոչյան, Երևանը XIII—XIV դարերում, թեկնածուական դիսերտացիա, ձեռագիր, Երևանի պետհամալսարան, 1941, էջ 15—16։

30 Տե՛ս Հ. Շահխաթունյանց, նշվ. աշխ., հատ. II, էջ 134—135։ Մեսրոպ Սրմբատյանց, նշվ. աշխ., էջ 5։ Ե. Շահազիզ, նշվ. աշխ., էջ 68—70։ Հ. Ժամկոչյան, նշվ. աշխ., էջ 15—16 և այլն։

ւորք Օթման և Օդբայ։ Եւ իբրև հասին ի սահմանս Հայոց՝ յերիս բաժանեալ առաջս՝ սփռեցան յասպատակս իւրեանց։ Առաջ մի հատեալ ընդ կողմն Վասպուրական աշխարհին՝ առին զաւանս և զամրոցս որ մինչև ի Նախջաւան քաղաք. և առաջ մի ընդ կողմն Տարօնոյ։ Եվ միւս առաջն հասեալ ի Կոդովիտ պաշարէին զամրոցն Արծափայ...»[31]։

Սակայն նույնը չի կարելի ասել Հովհաննես Դրասխանակերտցու և Սամվել Անեցու մասին։ Ահա թե ինչ են հաղորդում նրանք.

Հովհաննես կաթողիկոս՝

«Յայնմ ժամանակի (Անաստաս կաթողիկոսի օրոք—Թ. Հ.) ասեն լինել զկռիւն, որ 'ի քաղաքագիւղն Երևանի, զոր և բաւական քեզ ուսուցանեն զայնր պատերազմի զհանգամանս որ զնախ քան զմեզ զնա պատմագրեցին»[32]։

Սամվել Անեցի՝

«ՈԿ (660)։ Երևանու կռիւն, յորում զիարդն գտցես առ պատմագրութիւնս առաջնոցն. Շապուհ և Ասողիկ յիշեն»[33]։

Նրանց այդ համառոտակի, բայց միանգամայն հասկանալի վկայություններից երևում է, որ արաբական արշավանքների շրջանում Երևանում, բացի Սեբեոսի հիշատակածից, մեծ կռիվ է եղել նաև դրանից մի քանի տարի անց, ըստ Սամվել Անեցու՝ 660 թ.։ Նույն հիշատակություններից դժվար չէ կռահել, որ արաբական այդ արշավանքի հիմնական նպատակներից մեկը, թերևս ամենահիմնականը, Երևանի գրավումն էր։ Այլապես մեր պատմիչներն այն չէին կոչի «Երևանու կռիւն»։ Այնուհետև, Սամվել Անեցին նշում է, որ այդ կռվի մասին կգտնես Շապուհի (Բագրատունու) և Ասողիկի մոտ, իսկ Դրասխանակերտցին առանց իր աղբյուրների անունները տալու նշում է, որ Երևան «քաղաքագիւղում» եղած կռվի մասին «բաւական» մանրամասնությամբ հաղորդել են իրենից առաջ ապրած պատմագիրները։ Այդ բոլորը մեզ բերում են այն համոզման, որ Սեբեոսի նկարագրած արշավանքը, որտեղ Երևանի մասին նշվում է միայն կողմնակի կերպով, բավարարվելով՝ «եւ եկին ժողովեցան ի յերևան, և մարտեան ընդ բերդին, և ոչ կարացին առնուլ» արտահայտությամբ, նույնը չէ, ինչ որ Հովհաննես կաթողիկոսի և Սամվել Անեցու «Երևանու կռիւն»։ Նա նույն ձևով, թերևս ավելի մանրամասն, հաղորդում է նաև Որդուսպուում, Նախճավանում և այլ տեղերում արաբական արշավանքների ժամանակ մղված պատերազմների մասին, բայց դրանցից ոչ մեկը հիմք չի դարձել հետագա պատմիչների համար հատուկ նշելու «Որդուսպուի» կամ «Նախճաւանայ կռիւն»։

Սեբեոսի և Դրասխանակերտցու ու Սամվել Անեցու հիշատակած այդ «յերեւանու»—«Երևանու» «կռիւներն» իր ժամանակին իրարից տարբերել է նաև Ղ. Ալիշանը։ Նա այդ մասին գրում է. «Եւ ետ ոչ բազմաց՝ յամի 642—3. 'ի սկիզբն արշաւանաց Արաբացւոց՝ յայտնի և ամրութիւն տեղւոյն. զի «եկին ժողովեցան ի յերեւան (ասէ Սեբիոս), և մարտեան ընդ բերդին և ոչ կարացին առնուլ։ Յետ սակաւ եւս ամաց (658) միւս և նշանաւոր եւս կռիւ լեալ է նոցա

31 Ղևոնդ, էջ 11։

32 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 92։

33 «Սամուէլի քահանայի Անեցւոյ, Հավաքումք ի գրոց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոյ մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ», Վաղարշապատ, 1893, էջ 83։ Տե՛ս նաև Հակոբոս Տաշյան, Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 292։

յերեւան քաղաքագեղջն, մինչեւ ի յիշատակ տարեդրութեանց անցանել դիպացն»[34]։

Տարբերելով արաբական արշավանքների շրջանում Երևանի բերդի գրավման համար մղված այդ երկու կռիվները (որոնցից մեկը տեղի է ունեցել 643, իսկ մյուսը՝ 660 կամ 658 թ.), միաժամանակ պետք է նշել, որ դրանցից ոչ մեկի մասին մենք առայժմ չունենք մանրամասն ու համակողմանի տեղեկություններ։ Առաջին կռվի վերաբերյալ Սեբեոսը բավարարվել է միայն մի արտահայտությամբ, որը, ինչպես տեսանք, նույնիսկ տեղիք է տվել այդ հիշատակությունը վերագրելու Առեստավանին կամ Հերին։ Ոչնչով ավելին չեն մեր ստացած տեղեկությունները նաև երկրորդ կռվի վերաբերյալ։ Հովհաննես Դրասխանակերտցին և Սամվել Անեցին նույնպես բավարարվում են դրա մասին մեկական արտահայտությամբ, ավելի մանրամասն իմանալու համար հղելով դեպի իրենց նախորդները։ Սամվել Անեցին այդ կռվի պատմագրության համար նշում է երկու հեղինակ՝ Շապուհ Բաղրատունուն և Ասողիկին (Ստեփանոս Տարոնացի)։ Բայց դրանցից վերջինի աշխատության մեջ (մեզ հասած վիճակով) Երևանի կռվի մասին ոչ մի հիշատակություն չկա, իսկ Շապուհի պատմագրական երկը մեզ չի հասել։ Հավանաբար այն բավական մանրամասնությամբ էր նկարագրել «Երևանու կռիւն» ու դրա հետ կապված իրադարձությունները։

Անկախ այդ բոլորից, հենց միայն այն փաստը, որ արաբներն իրենց առաջին արշավանքների ժամանակ ընդամենը մի քանի տարվա ընթացքում երկու ճակատամարտ են մղել Երևանը գրավելու համար և այդ ճակատամարտերից մեկը կոչվել է ուղղակի «Երևանու կռիւն», ցույց է տալիս Երևանի՝ VII դարում ամուր բերդ, ռազմա-ստրատեգիական կարևոր կետ և մեծ բնակավայր (ավան կամ, Հովհաննես կաթողիկոսի արտահայտությամբ, «քաղաքադիւղն») լինելը։ Արաբները, հավանաբար, Երևանը (որը Հայաստանի 551 թ. բաժանմամբ գտնվում էր բյուզանդական մասում, պարսկա-բյուզանդական սահմանից ոչ հեռու) գրավել են հենց դրա վրա կատարած իրենց երկրորդ հարձակման ժամանակ՝ կամ 660 թ. (ըստ Սամվել Անեցու), կամ 658 թ. (ըստ Ղ. Ալիշանի հաշիվների, Այրարատ, էջ 299)՝ «Երևանու կռվի» ժամանակ։ Հավանական է համարվում, որ Երևանը գրավելուց հետո արաբներն այն ամրացրին և դարձրին իրենց նստավայրերից մեկը[35], որը գտնվում էր նրանց փոխարքայական աթոռանիստ Դվինի դիմաց։ Հ. Ժամկոչյանը ենթադրում է, որ Երևանի արաբական շրջանի բերդը, որտեղ Հայաստանի մյուս բերդաքաղաքների նման զետեղված էր բավական բաղմամարդ կայազոր, գտնվել է հետագայի՝ XVI—XVIII դդ. բերդի տեղում[36]։

Զարմանալի չպետք է թվա, որ VII դ. «Աշխարհացոյցում» չեն հիշատակված ոչ Երևանը և ոչ էլ նրա շուրջն ընկած Կոտայք գավառը։ Հավանաբար այդ ժամանակներում Երևանը վարչականորեն դեռևս հաշվվում էր Այրարատյան աշխարհի նույնանուն գավառի բնակավայրերից մեկը։ Այրարատյան աշխարհը VI—VII դարերում բաժանված էր մի քանի գավառների, բայց ավանդույթի

---

34 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 299—300։ Հմմտ. Էփրիկյան, նշվ. աշխ., հատ. I, էջ 694։

35 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 300։

36 Հ. Ժամկոչյան, նշվ. աշխ., էջ 17։

ուժով դեռևս հիշատակվում էր Այրարատյան դավառ, որպես նույնանուն աշխարհի գլխավոր դավառ։ Երևանի անվան բացակայությունն այդ երկրագրական բնույթի երկում առավել ևս չպետք է տարօրինակ թվա նաև այն պատճառով, որ դրանում չեն հիշատակված Այրարատյան աշխարհի ուրիշ ոչ պակաս նշանակություն ունեցող քաղաքներն ու պատմական այլ վայրեր[37]։ Այնտեղ Այրարատյան աշխարհից հիշատակվում է փաստորեն միայն «յարքայանիստ Վաղարշապատ» քաղաքը[38], Երևանը չի հիշատակված նաև IX դարի արաբական հայտնի հեղինակ Բալաձորիի մոտ, որն իր աշխատության մեջ թվարկել է Հայաստանի բազմաթիվ քաղաքներ ու գյուղաքաղաքներ[39]։ Այն չի հիշատակված և Հայաստանի քաղաքների մասին կարևոր տեղեկություն տվող Արիստակես Լաստիվերտցու մոտ[40]։ Բայց դրանք ևս չեն կարող մեծ տարակուսանքի տեղիք տալ։ Բալաձորին օտար հեղինակ է և կարող էր Երևանի մասին նույնիսկ ոչինչ չիմանալ, իսկ Արիստակես Լաստիվերտցին, ինչպես հայտնի է, գլխավորապես հիշատակություններ ունի Անիի, Դվինի, Կարսի, Կարինի, Արծնի, Խլաթի և երկրի մեծահռչակ մյուս քաղաքների վերաբերյալ։ Երևանից բացի նրա մոտ չեն հիշատակված նաև բազմաթիվ այլ գյուղաքաղաքներ ու համեմատաբար փոքր քաղաքներ։

Վիմական արձանագրություններում Երևանն առաջին անգամ հիշատակվում է 874 թ. Սևանի Առաքելոց եկեղեցու պատի վրա։ Այս արձանագրությունը հայտնաբերել է Լ. Մելիքսեթ-Բեկը 1924 թ. և հրատարակել 1938 թ.[41]։

Այդ 5 տողանոց արձանագրությունը Լ. Մելիքսեթ-Բեկը ընթերցել է հետևյալ կերպ.

«Կամաւն այ Սիւնեաց տիկին (բնագրում՝ տքն) Մարիամ շինեցի զեկեղեցիս յանուն սբ առաքելոյն՝ միաբանութեամբ (բնագրում՝ միայբանութք) (Աշոտ[ոյ] (բնագրում՝ Ոշոտ) եւ տվեք վախմ սբ առաքելոցն, զՎարսերն, զԳոմաձոր, զՑամաքաբերդ, Բերդք, Ուռե // -ացտափ, որսն զկռակծնկին, այգի ի Գառնի եւ Երեւան. և թանկագին նշան // ք ածընկալ սբ նշանաց տամ ի ժառանգութիւն զկտակելոյ (sic) զկորատեղ, ով խափանէ՝ ՅԺ.[ից] նզովեալ եղիցի. թվ ՅԻԳ.»[42]։

Նույն բովանդակությամբ հիշատակություն ունի և Ստեփանոս Օրբելյանը։ Նա գրում է. «Ահա սոյն երևմամբ վերին աղդեցութեամբ շարժեալ մեծ թագուհին Մարիամ՝ ամուսին Վասակայ Սիւնւոյ, դայ առ սուրբն Մաշտոց. և բազում թախանձանօք հաւան ածեալ զնա ձեռն ի գործ արկեալ շինեն զդեղապաճոյճ եկեղեցիսն յանուն սուրբ առաքելոց, և զմիւսն, յանուն տիրուհւոյ Աս-

---

37 «Աշխարհացոյց է դարու» (համառոտ խմբագրություն), էջ 20։ «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յավելուածուք նախնեաց» (ընդարձակ խմբագրություն), Վենետիկ, 1881, էջ 33—34։ Տե՛ս նաև Ա. Ա ո ր ա հ ա մ յ ա ն, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 348—351։

38 «Աշխարհացոյց է դարու», էջ 20։

39 Տե՛ս «Из сочинений Баладзори «Книга завоевания стран», Баку, 1927.

40 «Պատմութիւն Արիստակեսի Լաստիվերտցւոյ», Երևան, 1963։

41 Л. М е л и к с е т-Б е к о в, Новооткрытая надпись на Севане от 874 г., «Памяти академика Н. Я. Марра (1864—1934)», М.—Л., 1938, էջ 409—415, արտ.։

42 Լ. Մ ե լ ի ք ս ե թ-Բ ե կ, Երևանի հիշատակությունը Սևանի 874 թ. արձանագրության մեջ ՍՍՌՄ ԳԱ Հայկական ֆիլիալի «Տեղեկագիր», № 4—5, Երևան, 1940, էջ 117—118։

տուածածնին. և զարդարեալ մեծամեծ սպասուք կանգնեն զնա տուն Աստուծոյ և ընակարան աստուածազգեաց արանց յ323 թուականին Հայոց։ Բայց Մաշտոց եղիր սահման վանիցն, և պայծառացոյց երկնքատակ կարգօք. յորմէ համարոյ միաբաննալ Աշոտոյ՝ իշխանաց իշխանի, սուրբ ուխտին՝ դայ ի տեսութիւն սուրբ հօրն. և ընծայէ զփրկական նշանն աստուածընկալ խաչին. և տայ ի ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն գեօղս՝ զՎարսերն, զՑամաքարերդ, զԳոմաձորն, զԲերդքն, զՈւրկաց տափ և զորսն կոակծին, և այդիս ի Գառնի և յԵրևան և յայլ տեղիս. և բաղում նզովիւք հաստատեցին»[43]։

Օրբելյանն ունի նույն կարգի մի այլ վկայություն ևս, ուր նա պատմում է Մաքենիս վանքի կառուցման և նրան տրված կալվածքների ու նվիրատվությունների մասին։ Օրբելյանի այդ հիշատակությունը այն արձանագրության կրկնօրինակն է, որ վանքը կառուցողները փորագրել են նրա պատի վրա։ Այնտեղ ասված է (բերում ենք համառոտագրելով).

«Կամաւն Աստուծոյ ես Սուփան Սիւնեաց իշխան, շինեցի զՄաքենոցաց եկեղեցիս և անխնայարար զարդարեցի զպատուական սպասուք և աստուածային կտակարանօք. և ետու զսեփական տեղն մեր ի սա որ ըստ անուան եկեղեցւոյս Աստուածածին ասի, իւր ամենայն սահմանօք, լերամբ և դաշտիւ, և ետու որս ձկանց զԲողաշեն սեղանոյն, և 700 դրամ ի Դեղձանագետոյ զապալէն, 200 դրամ ի Կթկայ, 350 յԱնմեռէն, որ լինի 1250 դրամ. ետու և 5 կուզպակս ի յԱնի և 5 այգի յԵրևան և 500 առու այգի ի զիւղաքաղաքն Գառնի, և 2 այգի յԵղեգիս, և զամենայն պէտս սուրբ եղբայրութեանս լիցի առատապէս և փարթամացուցի ներքոյ և արտաքոյ. ետու և ջուլիրս եղանց և ջոկս զուարակաց և անդեայս և հօտս ոչխարաց...»։ Ահա այս իսկ էր արձան Մաքենոցաց, բայց վասն հնութեանն և խախտելոյ քարանցն ոչ կարացաք զրովանդակն իմանալ. այլ բաղում բանք և տուրք իշխանացն պակասին. զայս փոքր ի շատէ եղաք զի մի՝ բնաւին ջնջեալ կորիցէ յիշատակ նոցա. և այս ամենայն զործեալ եղև յ300 թուականէն (851) մինչև յ350 (901)»[44]։

Բերված վկայությունները նախ և առաջ ուշադրավ են նրանով, որ զրանցում Երևանը հիշատակվում է ոչ թե գյուղերի հետ (Վարսեր, Ցամաքարերդ, Գոմաձոր, Բերդ, Ուրյաց տափ, Բողաշեն, Դեղձանագետ, Կեթիկ, Անմեռ), այլ Անի քաղաքի և Գառնի ու Եղեգիս գյուղաքաղաքների շարքում՝ «և այդիս ի Գառնի և յԵրևան», «ետու և 5 կուզպակս ի յԱնի և 5 այգի յԵրևան և 500 առու այգի ի զիւղաքաղաքն Գառնի, և 2 այգի յԵղեգիս»։ Իսկ այդ ցույց է տալիս, որ Երևանը IX դարում գյուղաքաղաք էր համարվում։ Ըստ Երևույթին, նա գյուղաքաղաք է կոչվել դեռ VII դարում։ Չէ որ Հովհաննես կաթողիկոսը, խոսելով այդ դարի երկրորդ կեսի սկզբներին Երևանում տեղի ունեցած կռվի մասին, ուղղակի գրում է, որ զրանք տեղի են ունեցել «ի քաղաքաղիւղն (կամ գյուղաքաղաք— Ռ. Հ.) Երևանի»[45]։ Իզուր են փորձում պատմագիր կաթողիկոսի՝ Երևանի որպիսության մասին այդ վկայությունը վերագրել նրա ապրած շրջանին՝ IX դ. վերջերին և X դարի առաջին քառորդին։ Հավանարար նա արաբական ար-

43 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 173—174։

44 Նույն տեղում, էջ 179—181։

45 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 92։

շավանքները նկարագրել է ճիշտ այնպես, ինչպես իր օգտագործած աղբյուրներն են հաղորդել, միայն դրանք համառոտագրելով։ Այլ կերպ ասած, VII դարում բերդ ունեցող Երևանը միաժամանակ գյուղաքաղաք էր։ Սովորական գյուղերը բերդեր չունեին։ Հատկանշական է նաև այն, որ Դրասխանակերտցին, խոսելով VII դ. կեսերի դեպքերի մասին, Կոտայքը համարում է նահանգ. «և տայ բնակութիւն նմա զգիւղն Զագ 'ի նահանգին Կոտայից, որ զկնի ամաց իսկ 'ի Դվին քաղաքի ընկալաւ զմարտիրոսական պսակն»[46]։ Փաստորեն Դրասխանակերտցու այս վկայությունն արդեն անառարկելի է դարձնում Երևանը VII դարում բերդ և նշանավոր բնակավայր՝ գյուղաքաղաք լինելը, եթե նույնիսկ Կոտայքը նահանգի փոխարեն համարենք գավառ, ավելի արժանահավատ համարելով Ստեփանոս Օրբելյանի՝ Բուղայի արշավանքների առիթով (853 թ.) կատարած հիշատակությունը, որի մեջ նա Կոտայքը իրոք որ համարել է գավառ. «...և Վասակ ոչ հաւատացեալ յամբութիւն բերդիցն (Սյունիքի). այլ խոյս տուեալ անց գնաց զկողմամբք Կոտայք գավառի»[47]։ Իսկ միջնադարյան Հայաստանի բոլոր գավառների կենտրոնները, գրեթե առանց բացառության, ունեին բերդեր կամ ամրոցներ, որոնց շուրջը տարածված բնակավայրերը ճնշող մեծամասնությամբ ոչ թե հասարակ բնակավայրեր էին, այլ քաղաքներ կամ գյուղաքաղաքներ։ Այսպիսով, այս անուղղակի փաստերը նույնպես գալիս են ասելու, որ Կոտայք «նահանգի»— գավառի կենտրոնը պետք է որ լիներ Երևանը, նա գավառի ամենահայտնի բնակավայրն էր և ուներ բերդ։ Հետևապես անընդունելի է որոշ հեղինակների այն տեսակետը, որ իբր մինչև X և նույնիսկ XII—XIII դարերը Երևանը հասարակ բնակավայր էր։

Նախորդ դարերի նման Երևանի բնակչության հիմնական զբաղմունքներից մեկը, թերևս ամենահիմնականը, այգեգործությունն էր։ Վկայակոչված փաստերից պարզ երևում է, որ Երևանը Գառնիի նման հայտնի էր իր այգիներով և որ մի քանի վանքեր այնտեղ ունեին այգիներ։ Անշուշտ, այգեգործության հետ միասին Երևանում զբաղվում էին գյուղատնտեսության նաև այլ ճյուղերով, բայց մեր պատմագիրները դրանց մասին, առիթ չունենալով, ոչինչ չեն հաղորդել։ Իբրև գյուղաքաղաք Երևանում կային արհեստավորներ. որոնց մեծ մասն արհեստի հետ միասին զբաղվում էր նաև գյուղատնտեսությամբ։ Հավանաբար բավական կարևոր տեղ էր գրավում առևտուրը։ Երևանը առևտրա-տնտեսական առումով հարմար դիրք ուներ հնագույն ժամանակներից ի վեր։ Այս տեսակետից նրա դիրքն ավելի նպաստավոր է դառնում արաբական տիրապետության սկզբնական շրջանում, երբ նրա վրայով Հայաստանի մայրաքաղաք Դվինը կապվում է Աղվանքի մայրաքաղաք Պարտավի հետ։ Հ. Մանանդյանը Հովհաննես Դրասխանակերտցու, Ստեփանոս Օրբելյանի և ուրիշ պատմագիրների վկայությունների ու այլ կարգի աղբյուրների հիման վրա համոզիչ կերպով պարզել է այդ երկու մեծ քաղաքներն իրար հետ միացնող կարևոր ճանապարհի հին ուղղությունը՝ Դվին—Պարտավ—Բերդկունք (Սևանա լճի հարավային ափին)—Կոթ ավան (այժմ՝ Ներքին Գետաշեն գյուղ Մարտունու շրջանում)—Զոդի լեռնանցք—Կաղանկատու ավան (Տրտու՝ Թարթառ գետի ափին)—Պարտավ (Թարթառ գետի ստորին հոսանքի ափին,

46 Նույն տեղում, էջ 92։

47 Ստեփանոս Օրբելյան, էջ 170։

ներկայումս Ադրբ. ՍՍՀ Բարդա շրջկենտրոնի մոտ)[48]։ Այդ ճանապարհը հիմնականում համընկնում էր այժմյան Երևան—Սևան—Կամո—Մարտունի—Զոդի լեռնանցք—Բարդա ճանապարհի հետ։ Նրա վրա գտնվող գրեթե բոլոր կայանները՝ Բերդկունքը, Կոթը և մյուսները ոչ միայն տարանցիկ առևտրի կետեր էին, այլև իրենց սեփական ապրանքներով որոշ մասնակցություն ունեին այդ առևտրին։ Այդ հավասար չափով կարող է վերաբերել նաև Երևանին, չնայած որևէ վաստ չկա վերջինիս առևտրի ծավալի, բնույթի և ապրանքների կազմի մասին։

Հնագույն և ուրարտական ու աքեմենյան ժամանակաշրջաններին վերաբերող (հողի տակ ծածկված) հուշարձանները չհաշված, Երևանի մեզ հայտնի նշանավոր ամենահին կոթողը Պողոս-Պետրոս եկեղեցին էր, որը գտնվում էր այժմյան «Մոսկվա» կինոթատրոնի տեղում և քաղաքի վերակառուցման ու վերապլանավորման պատճառով քանդվել է 1931 թ.։ Մինչ այդ, Պողոս-Պետրոսը սովորաբար համարում էին XVII դարի (1690 թ.) կառուցվածք։ Բայց քանդելու հետ միաժամանակ կատարված հնագիտական ուսումնասիրությունները Աշխարհբեկ Քալանթարին բերեցին այն համոզման, որ այդ եկեղեցին նախապես իրենից ներկայացրել է V—VI դարերին հատուկ բազիլիկա և չնայած հետագայում մի շարք անգամ ենթարկվել է նորոգումների, իսկ «1679 թվի երկրաշարժից հետո կիսով չափ» վերակառուցվել է, «բայց նա իր ներքին մասում դեռևս պահել է հարազատորեն V դարու բազիլիկայի առանձնահատկությունները»[49]։ Ճիշտ է նշում հեղինակը, Պողոս-Պետրոսի ճարտարապետական ոճի ու կառուցման ժամանակի հարցի լուծումը միանգամից հնարավորություն տվեց «մեր աչքի առաջ ռևալ» պատկերացնել «Երևան քաղաքի հեռավոր կուլտուրական անցյալը»[50]։

Քանդման ժամանակ հնությունների պահպանության կոմիտեի հանձնարարությամբ բավական մանրամասնությամբ նկարագրել, չափագրել և ուսումնասիրել են այդ տաճարը։ Նրա պատերի վրա կային մի շարք արձանագրություններ, որոնք վերաբերում են XVII, XVIII և XIX դարերին։ Հնագիտական և պատմա-մշակութային տեսակետից առանձնապես մեծ հետաքրքրություն են ներկայացրել իրար վրա վեց շերտ կազմող որմնանկարները, չհաշված ամենավերին շերտի կտավի վրա արած նկարը։ Ներքևից հաշված 5-րդ շերտի վրա թվագրված էր հայոց 580 թ. (1131 թ.)։ Նկարները եղել են ֆիգուրային ու ծաղկանկարներ, գծված յուղաներկով և էմուլսիոն-լաքով, բազմագույն։ Շերտերն իրարից բաժանելու և դրանք նկարչական տեսակետից պատշաճ ուսումնասիրության ենթարկելու համար տեղական ուժերից բացի Մոսկվայից հրավիրվում է նաև ականավոր նկարիչ-վերականգնող Զիրիկովը։ Տեսական աշխատանքը տալիս է ցանկալի արդյունքներ։ Պարզվում է, որ ներքևից հաշված այդ որմնանկարների առաջին և երկրորդ շերտերը շատ հին ծագում ունեն՝ վերաբերում են VI—VII դարերին և, իբրև այդպիսին, մշակութային առումով առանձնահատուկ արժեք են ներկայացնում։ Դրանք բացառիկ են ինչպես մշակույթի պատմության, այնպես էլ կատարման տեխնիկայի

48 Հակոբ Մանանդյան, նշվ. աշխ., էջ 181—182։ Նույնի՝ О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V век до н. э.—XV в. н. э.), 1954, էջ 197 և 255։

49 «Հայաստանի հնությունների պահպանության կոմիտե», Երևան, 1931, էջ 11։

50 Նույն տեղում։

տեսակետից։ Այդ որմնանկարների ուսումնասիրությամբ, Զիրիկովից բացի, զբաղվել են նաև Աշխարհբեկ Քալանթարը, գերմանացի Շուլցը, պրոֆ. Ն. Մառը, Հ. Քյուրտյանը, Տարադրոսը։ Որմնանկարների առաջին կամ հնագույն խավը ծաղկանկար է, իսկ մյուս խավերը՝ մարդանկարներ։ Առաջին խավը ժամանակագրական տեսակետից վերագրել են V—VI, իսկ երկրորդը՝ VI—VII դարերին[51]։

VI—VII դարերում Երևանում որմնանկարչության գոյությունը թույլ է տալիս Ա. Հովհաննիսյանին ենթադրելու, որ այդ ժամանակներում Ավանի և Զվարթնոցի նման Երևանը ևս, որը գտնվում էր դրանց արանքում, կարող էր դարձած լինել հայ քաղկեդոնականների հանգրվաններից մեկը, որովհետև, ինչպես նա նկատում է, VII դարում հայ լուսավորչական եկեղեցականների համար որմնանկարչությունը հատկանշական չէր[52]։ Սակայն պետք է ենթադրել, որ Երևանում այդ շրջանում քաղկեդոնականների ազդեցությունը, եթե գոյություն էլ ունեցել է, մեր կարծիքով տևական կամ իշխող չի եղել, որովհետև, ինչպես տեսանք, Երևանի հոգևոր ներկայացուցիչ Դավիթը ևս մասնակցում էր VII դարի սկզբներին Դվինի հակաքաղկեդոնական ժողովին։

Երևանի հայկական այդ հնագույն կարևոր կոթողի բնութագրման համար, որմնանկարներից բացի, կարևոր նյութ են ծառայել նաև այն քանդակազարդ և հետագայում սվաղով ծածկված քարերը, որոնք հայտնաբերվեցին տաճարի քանդման ժամանակ։ Մասնագետները գտնում են, որ դրանք V—VII դդ. Պողոս-Պետրոս տաճարի քարերից են, որոնք հետագայում օգտագործվել են նույն եկեղեցու վերանորոգումների ու վերակառուցումների ժամանակ[53]։

Միանգամայն ընդունելի է Հ. Քյուրտյանի այն հետևությունը, թե՝ «պատմա-գեղարվեստական տեսակետով այս նյութը կարևոր ըլլալե զատ, կարևոր է պատմական տեսակետով, Երևան կհայտնվի իբր հին և մշակույթ ունեցող հայրաքաղաք մը, քաղաքին մութ անցյալը իր մեկ տարբեր փուլին մեջ կլուսավորվի, և այսպես քանդվող Պողոս-Պետրոս եկեղեցին ցույց կուտա, որ Երևանի մեջ V—VI դարերուն կար ճարտարապետական նկատելի կերտվածք, քանդակագործության նմուշներ, ու կհաստատվի նաև ուրիշ տեղերե միայն ավանդությամբ ծանոթ նկարչության անժխտելի գոյությունը հոն»[54]։

Հետագայում Գառնիի, Արին-բերդի, Կարմիր-բլուրի և այլ վայրերի պեղումների ընթացքում հայտնաբերվեցին ուրարտական ու ետուրարտական հնագույն ժամանակներին վերաբերող խճանկարչության և որմնանկարչության անզուգական նմուշներ, բայց դրանք ամենևին չեն արժեզրկում Երևանի Պողոս-Պետրոս տաճարի որմնանկարները։ Ընդհակառակը, դրանք միայն հաստատում են, որ արվեստի այդ ճյուղը Հայաստանում զարգացման է հասել հնագույն ժամանակներից։ Եվ մեր մայրաքաղաք Երևանն էլ իր բաժինն ունի այդ արվեստի զարգացման մեջ։

---

51 Մանրամասն տե՛ս նույն տեղում, նաև Հ. Քյուրտյան, Նորագյուտ հին որմնանկարներ Երևանի Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցվույն, «Անահիտ» հանդես, Փարիզ, 1932 նոյեմբեր—1933 ապրիլ, № 3—6, էջ 56—63։

52 Այոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957, էջ 484։

53 Տե՛ս «Անահիտ» հանդես, 1932 նոյեմբեր—1933 ապրիլ, № 3—6, էջ 57—59։

54 Նույն տեղում, էջ 62։

ЕРЕВАН В VII—IX ВЕКАХ

Проф. Т. Х. АКОПЯН

(Резюме)

В армянских летописях и различных надписях Ереван упоминается с начала VII в. Из ряда свидетельств, относящихся к VII в., видно, что Ереван в то время был поселением городского типа и имел свою крепость, для захвата которой арабы в период своих нашествий в 642—643 гг. и в 658 или 660 гг. предприняли две кровопролитные битвы. В надписях Ереван впервые упоминается в 874 г. (надпись церкви Аракелоц Севанского монастыря). Из этого, а также из двух сведений историка Степаноса Орбеляна становится ясным, что в хозяйстве Еревана главное место занимало садоводство и что сады тогда являлись предметом дарствований. Город находился на караванной дороге Двин—Партав и играл значительную роль в транзитной торговле.

Известным архитектурным сооружением того времени был монастырь Погос—Петрос (св. Павла и Петра), находившийся на месте нын. кинотеатра «Москва» и снесенный в связи с реконструкцией города в 1931 г. Монастырь этот был известен своими шестислойными фресками, из коих нижние три слоя были сделаны в VI—IX вв. Фрески Погос—Петроса вместе с древними фресками, обнаруженными в развалинах крепостных городов Эребуни (Арин-берд) и Тейшебаини (Кармир-блур), показывают, что Ереван внес большой вклад в развитие этой области искусства.